ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6522-19 գրությամբ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6522-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2 Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ դիրքորոշում չի ներկայացվել:

Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությամբ հայտնել է, որ համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն, որի հայտով ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածում, արձանագրվել է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջներին: Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն 13.03.2019թ. Armeps էլեկտրոնային եղանակով տեղեկացվել է նշված անհամապատասխանության մասին և հնարավորություն է տրվել վերջինիս այն շտկելու համար: Պատվիրատուն նշել է, որ հաշվի առնելով, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում /13.03.2019թ.-14.03.2019թ. ներառյալ/ չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, վերջինիս հայտը մերժվել է հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրվել է, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

3. Նույն արձանագրության 6-րդ կետի 6.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.1 ենթակետով արձանագրված անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետով արձանագրել է, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված շտկման ենթակա փաստաթղթերը:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով մերժել է Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի ներկայացրած հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6522-19 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման նիստի ընթացքում*** իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով*** մինչև կասեցման ժամկետի ավարտը ***շտկել անհամապատասխանությունը***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով ***սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի I ՄԱՍ-ի 7-րդ կետի 7.9 ենթակետով սահմանվել է, ***եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Նույն կետի 7.10-րդ ենթակետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրվել է, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 6-րդ կետի 6.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.1 ենթակետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետով արձանագրել է, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված շտկման ենթակա փաստաթղթերը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով մերժել է Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի հայտը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստերը, նաև գործում առկա նյութերը արձանագրում եմ, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 1 հավելվածում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում, նշվել է, որ վերջինս ցանկություն ունի մասնակցելու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից հայտարարված ընթացակարգին, մինչդեռ՝ «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի համաձայն՝ պատվիրատու է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի հայտը, այն հիմքով, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը գործել է իրավաչափ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ դիրքորոշում չի ներկայացվել:

Այսպիսով, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման նիստի ընթացքում*** իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով*** մինչև կասեցման ժամկետի ավարտը ***շտկել անհամապատասխանությունը***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով ***սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները Ընթացակարգի հրավերով սահմանված

պահանջների նկատմամբ սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցման: Ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6522-19 գրությամբ Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ